ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԼՈՒՅՍ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Դ. ԽԱԺԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Խաժակյան.

Ի պատասխան Ձեր 22.11.2019թ. հ. Լ-01/33 գրության՝ Կենտրոն վարչական շրջանի Չարենցի փողոց հ. 27 շենք հասցեի բնակիչների բարձրացված հարցի վերաբերյալ, տեղեկացվում է, որ արխիվային նյութերում տրված որևէ քաղաքաշինական փաստաթղթեր չկան, ինչպես նաև վերոգրյալի մասին չկա որևէ գրություն:

Տեղեկացվում է նաև, որ կառուցապատման թույլտվությունները տրամադրվում են ՀՀ կառավարության 19.03.2015թ. «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» հ. 596-Ն որոշման համաձայն և ՀՀ կառավարության 15.12.2005թ. հ. 2330 որոշումով հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի դրույթներին և ՀՀ-ում գործող նորմատիվային պայմաններին չհակասելու պայմանով:

Միաժամանակ տեղեկացվում է, որ նշված հասցեում շինարարություն իրականացնելու վերաբերյալ դիմում ներկայացվելու դեպքում, Երևանի քաղաքապետարանի կողմից՝ օրենքի շրջանակներում, հաշվի կառնվի նաև բնակիչների դիմումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ